ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«09» 02 2026թ.
№ ԱՄՆ/ԱԳ/217

«Մարիամ Սարգսյան Խաչատուրի» Ա/Ձ-ին
ՀՎՀՀ 74336067
ՀՀ, ք. Գավառ 1201
հեռ. 093-62-56-31
էլ. հասցեն՝ fortender2023@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և անհատ ձեռնարկատեր Մարիամ Սարգսյան Խաչատուրի (այսուհետև՝ Ընկերություն) միջև 23.06.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-10/6-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ընկերությունը 2025թ. 3-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 400 հատ աթոռակներ (Աթոռակ զինվորական մետաղյա կարկասով /էսքիզ 2/) և 4-րդ եռամսյակում, ոչ ուշ քան 10.12.2025թ.-ը ևս պետք է մատակարարեր 400 հատ աթոռակներ (Աթոռակ զինվորական մետաղյա կարկասով /էսքիզ 2/), սակայն Ընկերության կողմից ապրանքների մատակարարում չի իրականացվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները 2-րդ եռամսյակում խախտվել են 65 օր, իսկ 3-րդ եռամսյակում խախտվել են 14 օր) և 6.6 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2026թ. փետրվարի 9-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ Ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 45,820 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 01.01.2026թ. և 11,600 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում ենթակա է գանձման նաև պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 312,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը՝ 468,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Ելնելով վերոգրյալից տեղեկացնում եմ, եթե մինչև 2026թ. փետրվարի 19-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 312,000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 468,000 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2026թ. փետրվարի 19-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2073 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ